# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164. 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/206/1-25

<<26 >>__նոյեմբերի 2025թ. ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ <<ԱՐԽԻԹՈՒԼՍ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Գ. ԱՅՎԱԶՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով Պետական առողջապահության գործակալության (ՊԱԳ) շենքի վերանորոգման (ընթացիկ) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 256 577.543 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*
*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական առողջապահության գործակալության (ՊԱԳ) շենքի վերանորոգման (ընթացիկ) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը

*Պատվիրատու՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ <<ԱՐԽԻԹՈՒԼՍ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Գ. ԱՅՎԱԶՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է Պետական առողջապահության գործակալության (ՊԱԳ) շենքի վերանորոգման (ընթացիկ) աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների կատարում, շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Միջնորմների կառուցում թեթև բետոնե բլոկներով՝ ամրանավորմամբ, միաձույլ երկաթբետոնե բարավորների կառուցում: Հատակները երեսապատվում են կերամոգրանիտե, խեցեսալե և լամինատե սալերով՝ ներառյալ շրիշակները: Պատուհանները իրականացվում են մետաղապլաստե պատուհաններով՝ բացվող և չբացվող մասերով, պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում: Ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ պատերի և առաստաղների սվաղում, ներկում լատեքսային ներկով, պատերը երեսապատվում են կերամիկական սալիկներով, կախովի առաստաղների իրականացում: Մետաղապլաստե դռների տեղադրում, ալյումինե վիտրաժների իրականացում: Արտաքին հարդարման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր: Էլեկտրաուժային սարքավորումների և էլեկտրալուսավորության ցանցերի անցկացում, լուսատուների, անջատիչների և վարդակների տեղադրում: Հակահրդեհային համակարգերի իրականացում: Ջեռուցման և օդափոխության համակարգերի անցկացում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկներով Հաշվարկը կազմում է ՝ 256 577.543 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2425.27** և մեքենաների շահագործման ինդեքսը **3002.27**

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N 05 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ս. Սիրեկանյան***

***Փորձագետ՝ Տ. Վիրաբյան***